

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ Ա Խ Հ Ա Յ Գ Ե -Գ Ի Ն Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Խ Փ Ո Ր Զ Ա Յ Ա Յ Ա Յ  
Ա Յ Գ Ե Գ Ո Ր Ծ -Գ Ի Ն Ե Գ Ո Ր Ծ Տ Հ Ա Ն Ր Ա Մ Ա Տ Ձ Ե Լ Վ Գ Ա Մ Ա Յ Ա Յ

Ն Ի Կ . Ն Ի Կ . Պ Ր Ա Ս Ո Ս Ե Ր Գ Ա Վ .

Հ Ա Մ Ա Ո Ո Տ Հ Ր Ա Հ Ա Ն Գ  
Խ Ա Ղ Ա Դ Ի Ք Ա Ղ Յ Վ Դ Ի Բ Ա Ղ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ա Բ  
Վ Ո Ր Ո Շ Ե Լ Ո Ւ

Թ ա ր գ մ . Ա յ զ ե զ ո ր ծ - պ ի ն ե զ ո ր ծ  
Յ Ե . Մ . Ն Ա Զ Ա Ր Յ Ա Ն Ց

Հ Ա Բ Ա Ն Ո Ւ Յ Ա Կ Ա  
И Н С Т И Т У Т А  
Б Ո Յ Տ Ո Ւ Յ Ե Ն Ե Լ Ա  
Р а з д е л и я Нау к  
С С С Р

663.2

Դ - 99

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1931

## Ա.

ՆԱԴՈՂԻ ՔԱՂՑՎԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԶՈՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Խաղողի և նբա քաղցկե (շիրակի) բաղադրությունը, ինչպես  
և զինու, շատ բարդ է, բայց ամենագլխավոր բաղկացուցիչ մա-  
սերը՝ դա շաքարն ու թթվուաներն են. Քաղցկե խսորման (յիշ  
գողու) ժամանակ շաքարը փոխարկվում և սպիրտի – վ դու: Վոր-  
քան ավելի յե շաքարը խաղողի հատապտղի մեջ, այնքան ավելի  
թունդ զինի յե ստացվում: Խոստ շաքարաշատ քաղցուն (իս-  
ռամեցրած խաղողից) լին ամրողավին չի ավարտում: Խաղողի  
թթվությունը (գլխավորապես զինեթթվուտն ու խնձորաթթվուտը)  
զինուան տալիս և թթվաշ, թարմացնող համ. չափավոր թթվու-  
թյան գեղքում քաղցուն ավելի լավ և ինքում և զինին ավելի լավ  
պահպանվում: Խնչպիս շատ թթու քաղցուն, այնպիս և քիչ թթուն  
(ստափակ») ցանկալի չեւ:

Խաղողի լրիվ վերլուծությունը հնարավոր և միայն քիմիական  
քարոզատորիայում, իսկ գործնական զինեկործության համար սո-  
վորաբար բավական և վորոշել շաքարայնությունն ու թթվու-  
թյունը, վորոնցից մեծ չափով կախված և զինու և ուրիշ նյու-  
թերի վորակը: Շաքարայնության ու թթվության վորոշումը շատ  
հասարակ բան և և այդ կարող և կատարել գուրզում ամեն մը  
զբագետ այգիկործ զինեկործ:

Այդ բանի համար անհրաժեշտ անոթներն ու ռեակտիվները  
կարելի յե ձեռք բերել Այդե-Կինեկործական Փորձնական կարա-  
նի միջոցով, վորին պիտի զիմել զրքույկիս վրա նշանակված հաս-  
ցեավ:

Գործնական այգեգործը, իերկար տարիներ աշխատելով, կա-  
րող և խաղողի հասունությունը վորոշել նրա արտաքին տեսքից  
(հատապտղի գույնը, համը, նրա չափը, հութի հեշտությամբ  
զուրս հոսումը սիդմելիս, և այլն), թեպետ և այս ձերի վորոշումը  
չի կարող ճշշտ լինել: Յեվ, վորովհետև, ինչպիս ասվեց վերևում:

քաղցրության ու թթվության վորոշումը շատ հասարակ մի քանի է, ուստի, հարկավ, ավելի լավ և ոգովել քիմիական յեղանակից:

Շաքարայնության ու թթվության իմանալը, բացի ազգեկութի ժամանակը վորոշելուց, կարենոր և ամբողջ շրջանն ազգեղինեգործական տեսակետից բնորոշելու համար,—այսինքն՝ թե վոր փոփոխակները (սորտերը) երբ են կատարելապես հասունանում, ինչ տիպի գիները կարելի յեն նրանցից շիներ, և այն:

Այդ տվյալները նշանակություն ունին միայն մասսայական հետազոտություններ կատարելու դեպքում, վորով ներկայումս դրազված և ՀՍԽՀ Ալգե-Գինեգործական Փորձնական Կայանը:

Բ.

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԻ ՆՄՈՒՇ ՎԵՐՑՆԵԼԸ

Տվյալ այգու խաղողի բաղադրության մասին ճիշտ դատարկություն անելու համար պետք են փորձի նմուշը ճիշտ վերցնել, այնպես վոր նա այգու տվյալ մասի համար միջինը լինի Յեթե վերցնել միայն լավ հասունացած վողկույզներ կամ, ընդհակառակը, թերահասները, այն ժամանակ ստոցված այցաները կամ չափազանցված կլինին կամ նվազեցված: Միջին նմուշի համար խաղող վերցնելիս այդին աշխաչափով բաժանում են մի քանի մասերի և վողկույզները քաղցում նրա բոլոր կողմերից ու խաղողի թիթի զանազան մասերից և ապա նկատի ինքն առնում, թե վորքան հասուն կամ իսկ գողկույզներ են լիդեր:

Փորձի նմուշի համար բարեկան է 1—1½ կիլո խաղող:

Ենք խաղողի հասունանալու ընթացքին հետևում են ազգեկութի ժամանակը վորոշելու նպատակով, հետազոտությունը կը ընում են 3-4 որից հետո և վերջացնում այն ժամանակ յերբ խաղողն արգեն իր տեսքով համարյաթե հասունացած է լինելում:

Խաղողը հասունանալիս նրա շաքարայնությունն ամելանում է, իսկ թթվությունը պակասում: Հետազարում հավասարակրշություն և հաստատվում և վերջում շաքարայնությունը կարող և նույնիսկ պակասեր: Շաքարայնության նվազումը հատկապիս նկատելի լին անձրեկից հետո: Խաղողը քաղցում են նրա, աքսես կոչված, տեխնիկական կամ արզունագործական հասունության վիճակում, այսինքն՝ այնպիսի բաղադրության ժամանակ, վորն ամենալավագույնն է համարվում խաղողի վերամշակման

(սեղանի և թղունդ գիների, գոշաբի, սուջուխի, խաղողի հյութի, չամչի և այլն) համար: Արինակ, սեղանի գինի պատրաստելու համար մեծ շաքարայնություն չի պահանջվում, վորպեսզի շատ թունդ գինի չստացվի (1 գրամմ շաքարը տալիս եւ մոտավորապես 0,6 գրամմ ծավալային աստիճանի ալիքում վոգի, այսինքն՝ հյութի կշռի կիսից մի քիչ ավելի): Այսպես, լիթի խաղողի քաղցում (շիրամի) մեջ շաքարայնությունը 24% և (100 խորանարդ սանտիմետրի մեջ 24 գրամմ), այն ժամանակ շաքարի լրիվ խմորման դեպքում ապագա գինու թղունդյունը կլինի մոտավորապես 14-16%: Խոչ թթվություն, ընդհակառակը, շատ և պահանջվում (6-7% և ավելի, այսինքն մեկ լիտրի մեջ 6-7 գրամմ և ավելի), վորպեսզի սկզբանի գինին թարմացնող ու ծարավը հագեցնող խմիչք լինի: Թթու քաղցում (շիրամ) լիփը հեշտ և գերջացնում, հիվանդացու քիչ հակում ունի և ավելի դիմացկուն գինի լի տալիս: Հարկավոր և նույնպես աչքի առաջ ունենալ, վոր քաղցում լիփ գալու և գինի պահելու ժամանակ թթվությունը պակասում է:

Գ.


### ՓՈՐՁԻ ՆՄՈՒՇ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Ամենից լավ կլինի փորձի համար վերցնվող հատապտուղներից հյութը հանել ձեռքի մամուլով (նկ. № 1), ալդ գեղցում հյութը մշվում և վոչ թե ճիշտ համար վասպատզի արտաքին շիրամը, այլ և ներքին:

Չեսքի մամուլ չեղած գեղցում փորձի համար վերցրած խաղողը տրորում են ձեռքով թասի կամ ուրիշ ամանի մեջ: Խաղողը պետք է ճշմել բավականի սեփով, վորպեսզի հյութը լավ մրցվի:



Նկ. № 1. Չեսքի մամուլ.



հատապտոսի ամենաներքին մասներից («սրտիկից»), վորովհետև և ութը հատապտղի արտաքին ու ներքին մասներում միատիսակ չել լինում

Ստացված քաղցուն (շիրան) պղտոր և լինում և նրա մեջ լող են տալիս պինդ մասնիկներ (պտղամսի լորձնալին մասնիկներ, մաշկի կտորներ, և այլն), վորոնք խանգարում են քաղցվի բաղադրությունը ճիւտ վորոշելու։ Այդ աստճառով հարկավոր և քաղցուն քամել նոսր գործածքի, բամբակի կամ ավելի լավ և քասիչի միջացով՝ ձագարի ովնությամբ։ Կարելի ին նույնական թողնել վոր քաղցուն պարզվի և հետո բաժանել նրան տականքից։

Քամում քաղցուն լցնում են ապակյա գլանը (սովորաբար քամում են ուղղակի գլանի մէջ) Փրփոր գործանելուց խոսափելու համար քաղցուն լցնում են գլանի պատերով, մի փոքր թեք պահելով այն։ Յեթե փրփոր և գործանում հեռացնում են քամելու թղթի կտրուք։ Դլանը զնում են այնպես, վոր նա կանգնած լինի ուղղահայց (հարթ սեղանի կամ պատուեանի ներքնատախտակի վրա)։ Դլանը նախորոք լինում և փողողում են հենց նույն քաղցվով, վորը հետազոտում է։ Ապա գանդաղ, առանց շարժումների, շաքարաչափն իջնում են քաղցվի մեջ (նկ. № 2)։

Դյուժարգին-Շալիկրոնի շաքարաչափը բաղկացած և ապակյա լիրկար մարմինց և նեղ պարանոցից, վորի վրա թվանշաններ են գրված։

Հեղուկաչափի մարմինը վերջանում և մեջը մնդիկ լցրած ապակյա գնդիկով, վորը շինված և դրծիքին կայունություն տալու համար։ Այդ նույն գնդիկը պահպանում է հեղուկաչափի մեջ անդավորված շերմաչափը։

Շաքարաչափով ոգտվելիս հարկավոր և պահպանի հետևկալ կանոնները։

1. Շաքարաչափը պետք է լինի չոր ու մաքուր։

2. Լիմացված գլանը պետք է փողողված լինի հետազոտվող քաղցվով։

3. Հեղուկաչափի պարանոցը հեղուկի մակերեսից բարձր թրջված չպետք և լինի, վորի համար շաքարաչափը զգույշ, առանց շարժումների, պետք և խորասուղել քաղցվի մեջ։



Նկ. № 2.

4. Քաղցվով լցրած գլանը պետք է ուղիղ կոնկնած լինի։  
5. Շաքարաչափը պետք է լող տա զլանի մեջտեղում, առանց նրա պատերին գիրզչելու։

6. Քաղցուն պղտոր չպիտի լինի և լեզվերին մը փոփուր չպիտի ունենաւ (փրփուրը կարելի է միջնորդ թղթի կտրուով)։

7. Վորոշումը կատարելիս պետք և զիտել ջերմության տառիքանը և, յեթե հարկավոր և, ուղղում կատարել համաձայն ըստորև բերված համապատասխան աղյուսակի։

8. Համրանքը պետք և կատարել ճշտությամբ։  
Համրանքն այսպիս և կատարվում։

Քաղցուն զլանի մակերեսի վրա մի փոքր խոր ընկած ել լինում, ինչպիս լուսնի յեղջյուրը (այսպես կոչված սենիւկ-կիսալուսին)։ Իսկ յերբ հեղուկը կազում և զլանին՝ նրա պատի մումի քիչ բարձրանում է։ Շաքարաչափի ցուցանիքը ճիշտ կարգայու համար հարկավոր և աչքը պահել ուղիղ այն ստիճանի վրա, վորանող գործիքի պարանոցը շոշափում և զլանի մը ջի հեղուկը վերջնին զլանի պատին կազելուց գործած բարձրությունից ցած (տես նկ. № 3)։ Այն ժամանակ կիսալուսինի ցոլքը աչքին յերեւում և մի համատարած մութ գիծելով։

Շաքարաչափն ունի թվանշաններ՝ վերևում 980, ներքեւում 1130, այսինքն՝ մի լիտր քաղցուն պիտի կզո՞րի 980 և 1130 զրամ։ Կողքին ցուց և տրված, թե վորքան ալֆոնով կատացվի ավել շաքարանության զեպքում։

Մալիկրոնի շաքարաչափը ճիշտ և ցուց տալիս միայն ծերսիում 150-ի զեպքում։ Խոկի իմենք հետազոտվող քաղցվի ջերմության աստիճանը 150-ից

ցած և կամ բարձր տարրել ջերմաստիճանների համար համացածը և կամ բարձր տարրել ջերմաստիճանների համար համացած մացնել—այսինքն՝ զիտված խտությանը պատասխան ուղղում անդիպական այն զիպքում, յերբ քաղցվի ջերմատիճանը բարձր և 150-ից և, ընդհակառակը, հանել, յերբ նրա ջերմաստիճանը ցած ցած և 150-ից։ Գտած խտությամբ (ջերմաստիճանին համապատասխան ուղղում կատարելուց հետո) № 1 աղյուսակի միջոցով գտնում են շաքարի պարանակությու-

Նը: Այդ աղջուսակները լինում են շաքարաչափի հետ միասին: Այդ աղջուսակի միջոցով կարելի յե ստանալ և ուրիշ տվյալներ — առարկա գիշու թնդությունը՝ նրա շաքարի կատարյալ խմորաման դեպքում, և այլն:

Դ.

### ԽԱՌԱՐԱԿԻ ՔԱՂՅԱՎԻ ՇԱՔԱՐԱՑԵՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՈՇԵԼԸ

Խաղողի քաղցվի շաքարայնությունը վորոշում են հեղուկաչափերի (արեոմեթր) միջոցով, վորոնք այս դեպքում կոչվում են շաքարաչափեր:

Նրանց կառուցվածքը հիմնված է ֆիզիկական այն որենքի վրա, վոր լողացող մարմինը խորասուղվում է հեղուկի մեջ մինչև անքան ժամանակ, քանի գեռ մարմինի խորասուղվող մասի կազմից գուրս մղված հեղուկի կշիռը չի հավասարվել այդ մարմինի կշիռին, իսկ վորովհետեւ մարմին (հեղուկաչափի) կշիռն անփոփոխ է, ուստի շաքարաչափի խորասուղման աստիճանից կարելի յե զատել հետազոտվող հեղուկի խտության մասին: Իսկ խտությունը վորու ծավալով կշիռ եւ Այսպիս, մաքուր ջրի 1 լիտրը կշռում է 1000 գրամմ, իսկ  $17\%$  շաքար պարունակող խաղողի քաղցվի մեկ լիտրի կշիռը — 1075 գրամմ: Խաղողի հյութի մեջ զլխավոր նյութը շաքարն եւ, վորի քանակությունն հետզետեւ տվելանում և այն չափով վոր խաղողն է հասունանում: Մյուս նյութերը քիչ են լինում և նրանց քանակը նկատելի չափով չի փոփոխվում: Այդ պատճառով խտությունից կարելի յե զատել քաղցվի միջն շաքարի պարունակության մասին: Վորքան ավելի թանձը և քաղցուն, այնքան, կնշանակե, ավելի շատ և նրա միջն շաքարը: Վորքան ավելի թանձը և հեղուկը, վորի մեջ խորասուղվում և հեղուկաչափը, այնքան ավելի քիչ և նա ընկղմվում: Ընդհատակը, մաքուր ջրի մեջ գործիքն ընկղմվում է մինչև պարանոցի ծալրը: Զանազան շաքարայնության լուծույթներ պատրաստելով ( $1\%$ -անի,  $2\%$ -անի, և այլն), կարելի յե գործիքի պարանոցի վրա գծեր քաշել, վորոնք ցույց կտան շաքարի լուծույթի թանձը ուտնը: Իսկ շաքարաչափեր պատրաստելիս նկատի յե առնվում վոչ թե շաքարի լուծույթը ջրի մեջ, այլ միջին, բաղադրություն ունեցող խաղողի քաղցուն (վորտեղ բացի շաքարից կան և ուրիշ նյութեր):

\* Բազմատեսակ շաքարաչափեր (արեոմեթրներ) կան, բայց նրանք բոլորն ել բաղկացած են ապակյա մնամեջ գլանից (հեղուկաչափի մարմնից և ինրիկար ու նեղ բնից—հեղուկաչափի պարանոցից) վրան թվանշաններ դրված:

Հեղուկաչափի մարմինը վերջանում է գնդաձև փքված—ուռուցիկ մասով, վորը լցված ել լինում սնդիկով կամ մանրազնդակով և ծառայում է վորպես բալլաստ՝ գործիքին կայունություն տալու համար: Հաճախ այդ փքված—ուռուցիկ մասը միաժամանակ ծառայում է վորպես պահաման (ուեզերվուար) հեղուկաչափի մեջ ներփակված ջերմաչափի համար:

Քաղցվի շաքարայնությունը վարուելիս շատ կարևոր է զիտել նրա ջերմության աստիճանը, վորովհետեւ հեղուկաչափը (արեոմեթրը) ճիշտ է ցուց ատլիս միայն վորոց ջերմաստիճանի ժամանակ: Յեթե քաղցվի ջերմաստիճանն այն չե, ինչ պահանջվում է (15<sup>o</sup> ծելսիւսի), այն ժամանակ ուղղում են մացնում տարերության համար, վորը գտնում են գործիքին կցված աղյուսակի միջոցով: Շատ հարմար ու բավականի տիպիք և Դյուժարդեն-Սալերոնի շաքարաչափը, վորից և մենք ոգտվում ենք:

Հետեւու համառոտ աղյուսակները լիովին բավական են առորդ կարիքների համար:

Ա.Վ.ՅՈՒՍԱԿ Պ.Պ.ՋԱՆ.

Թե ինչպես դիմում խուրայան միջոցով գտնել երան համապատասխանող շաբաթայնուրյունը բաղդվի մեջ:

| Դիմումի<br>թիվ | Բարձր<br>ջերմականութեան<br>% | Ապագան թիվ<br>Բնուրացնեան<br>ջերմականութեան<br>% | Դիմումի<br>թիվ | Բարձր<br>ջերմականութեան<br>% | Ապագան թիվ<br>Բնուրացնեան<br>ջերմականութեան<br>% |
|----------------|------------------------------|--|----------------|------------------------------|--|
| 1075           | 17,0                         | 10,0   | 1103           | 24,4                         | 14,4   |
| 1076           | 17,2                         | 10,1   | 1104           | 24,7                         | 14,6   |
| 1077           | 17,5                         | 10,3   | 1105           | 25,0                         | 14,7   |
| 1078           | 17,8                         | 10,5   | 1106           | 25,2                         | 14,9   |
| 1079           | 18,0                         | 10,6   | 1107           | 25,5                         | 15,0   |
| 1080           | 18,3                         | 10,8   | 1108           | 25,8                         | 15,2   |
| 1081           | 18,6                         | 10,9   | 1109           | 26,0                         | 15,3   |
| 1082           | 18,8                         | 11,0   | 1110           | 26,3                         | 15,5   |
| 1083           | 19,1                         | 11,2   | 1111           | 26,6                         | 15,7   |
| 1084           | 19,4                         | 11,4   | 1112           | 26,8                         | 15,9   |
| 1085           | 19,6                         | 11,5   | 1113           | 27,1                         | 16,0   |
| 1086           | 19,9                         | 11,7   | 1114           | 27,4                         | 16,2   |
| 1087           | 20,2                         | 11,9   | 1115           | 27,6                         | 16,3   |
| 1088           | 20,4                         | 12,0   | 1116           | 27,9                         | 16,4   |
| 1089           | 20,7                         | 12,2   | 1117           | 28,2                         | 16,6   |
| 1090           | 21,0                         | 12,3   | 1118           | 28,4                         | 16,7   |
| 1091           | 21,2                         | 12,5   | 1119           | 28,7                         | 16,9   |
| 1092           | 21,5                         | 12,6   | 1120           | 29,0                         | 17,1   |
| 1093           | 21,8                         | 12,8   | 1121           | 29,3                         | 17,3   |
| 1094           | 22,0                         | 12,9   | 1122           | 29,5                         | 17,4   |
| 1095           | 22,3                         | 13,1   | 1123           | 29,8                         | 17,6   |
| 1096           | 22,6                         | 13,3   | 1124           | 30,1                         | 17,7   |
| 1097           | 22,8                         | 13,4   | 1125           | 30,3                         | 17,9   |
| 1098           | 23,1                         | 13,6   | 1126           | 30,6                         | 18,0   |
| 1099           | 23,4                         | 13,8   |                |                              |  |
| 1100           | 23,6                         | 13,9   |                |                              |  |
| 1101           | 23,9                         | 14,1   |                |                              |  |
| 1102           | 24,2                         | 14,3   |                |                              |  |

Ա.Վ.ՅՈՒՍԱԿ Ա.Մ.ՋԱՐՈՒԹ

Թե ինչպես առքեր ջերմաստիճանների համար ուզում մատնել:

| Դիմումի<br>թիվ | Թե դիմում իւստ թյանը<br>ջերմաստիճանների մատնել |            |
|----------------|--|------------|
|                | Ապել ցնել                                      | Գ կոսիցնել |
| 16°            | 0,1  |            |
| 17°            | 0,3  |            |
| 18°            | 0,5  |            |
| 19°            | 0,7  |            |
| 20°            | 0,9  |            |
| 21°            | 1,1  |            |
| 22°            | 1,3  |            |
| 23°            | 1,6  |            |
| 24°            | 1,8  |            |
| 25°            | 2,0  |            |
| 14°            | —  | 0,2        |
| 13°            | —  | 0,3        |
| 12°            | —  | 0,4        |
| 11°            | —  | 0,5        |
| 10°            | —  | 0,6        |

Հետեւալ որինակները ցուցի են տալիս, թե ինչպես ուզում արդ աղյուսակներից:

Դիմում, շաքարաչափը կանգ առավ 1094 թվանշանի վրա, և կամ դիտելի ջերմաստիճանը 25°-ն. Յերկրորդ աղյուսակի սիջոցով դաշտում ենք, վոր քաղցվի ջերմաստիճանի մեջ մտցնելիք ուզումը՝ 2,0 հ. կոչանակի, դիմում 1094 խտությանը հարկավոր ե ավելացնել 2. 1094+2=1096:

Առաջին աղյուսակի միջոցով դաշտում ենք, վոր 1096 խտությանը համապատասխանում ե 22,6 տոկոս շաքարայնությունը:

21° ջերմաստիճանի դեպքում—ուզումը 1,1 հ. 1094+1,1=1095,1 (վորի 0,1-ը չի հաշվում ե, ընդհանրապես, մինչև 0,5-ը չի հաշվում, իսկ նրանից բարձր՝ 0,6, 0,7 և այլն, հաշվում ե 1 ամրությունը). շաքարայնությունը կլինի՝ 22,3:

Դիմում 1094 խտության և 10° ջերմաստիճանի դեպքում՝

1096—0,6=1093,4 (վորի 0,4-ը չի հաշվում, մեռմ և 1093).  
1093—21,8% Հաքաբ:

Ե.

### ԽԱՂԱԳԻ ՔԱՂՑՎԻ ԹԹՎՈՒԹՅՈՒՆԸ ՎՐՈՇԵԼԸ

Խաղողի քաղցուն—թթվահամ և, վորովհետև նրա մեջ դանը-  
փում են թթու միացմանը և նրա միամասը լուղու-  
նում են, վոր խաղողի քաղցվի մեջ գտնվում և միայն զինհթթվու-  
մաս, վորը առանձնապես բնորոշ է խաղողի համար: Դինու թթվու-  
մասը արտահայտում են լիտրով, այսինքն թե հրութի մեջ  
վայր ծավալի մեջ քանի գրամմ գինեթթվութ և պարփակվում:  
Այսպես, 5,4 թթվությունը ցույց է տալիս, վոր յարաքանչյուր  
լիտր հրութի մեջ պարփակվում 5,4 գրամ թթվուտներ, հաշված  
գինեթթվուտով (յինթաղբերով, վոր հրութի մեջ միայն զինհթթվու-  
մասն է): Այդ պատճառով այսպես կոչված լուսատեղի (լաքմուսի)՝  
կապտագույն թղթեկը կարմրում է, իեր նրա վրա խաղողի քաղ-  
ցու լինք կաթեցնում: Իսկ ֆենոլֆտալիինի (չոր ձեռվ սպիտակ  
նյութ և) սպիրտային լուծույթը ուրիշ թթու լուծույթներից գուշ-  
նը չի փոխում:

Լուսատեղի (լաքմուսի) կարմրագույն թղթեկը՝ նրա վրա քաղ-  
ցու կաթեցնելին՝ կապտում է, իսկ ֆենոլֆտալիինի լուծույթը  
ալկալիներից (այլ քաղցական կամ ուտիչ ալկալիներ, կիր, անուշա-  
ռի վողի) ներկվում և վարդի-մոռի (մալինալի) գույնով:

Յերբ վորեն թթու լուծույթի մեջ (ինչպես խաղողի քաղցուն  
և) աստիճանաբար ալկալի լինք լցնում և վրան ավելացնում ֆե-  
նոլֆտալիինի միքանի (2—4) կաթիլ, այն ժամանակ լուծույթը  
վարդի գույն և ստանում, վորը, սակայն, արագությամբ անհե-  
տանում է: Իսկ լիբը ալկալիի լուծույթը հաղեցնում և թթու լու-  
ծույթի վողջ թթվութը, ալկալիի լուծույթի ավելորդ մեջ կաթիլը  
ներկում և հեղուկը վարդի գույնով, վորն արդեն չի անհնտանում  
2—3 րոպեի ընթացքում: (Լուսատեղի կապտագույն ու կարմրագույն  
թղթեկներն այդ գեղքում մանուշակագույն են դառնում):

Վորովհետև քիմիայից հայտնի լի, թե վորքան վորոշ թրն-  
դության ալկալիի լուծույթ դետք և վերցնել վորոշ քանակու-  
թեամբ զինեթթվութ հաղեցնելու համար, ուստի, իման ճիշտ հայտ-  
նի լի ալկալիի լուծույթի քանակը, այն ժամանակ կարող ենք  
ճիշտ վորոշի քաղցվի թթվությունը:

Խաղողի քաղցվի թթվությունը վորոշելիս դործ և ածվում  
ալկալիի այնպիսի լուծույթ, վորի 1 խորանարդ սանթիմեթրը հա-  
գեցնում և ճիշտ 25 միլիլիգրամմ (մեկ հազարերրորդական զրամմ),  
զինեթթվութ (այսպես կոչված մեկրրորդական նորմալ լուծույթ):

Այդ բոլոր գատողությունները բերվում են նրա համար, վոր-  
պեսզի թթվության վորոշումը գիտակցորեն կատարվի:

Իսկ այդ վորոշումը կատարվում և ալսպես:

Ալկալիի պատրաստի լուծույթը ցցնում են ալուսիս կոչվուծ  
թրուբեաթ—համապատասխան կերպով խորանարդ սանթիմեթրնե-  
րի և տասնորդական մասերի բաժանված խողովակի—մեջ, վորի  
ծայրին անշաբթ կերպով ամրացված և ծորակը: Լուծույթը ցցնում  
են մինչև Բյուրեաթի վրա գրված 0 թվանշանը, այդ գեղքում հե-  
ղուկի լուսնիկը (մենիսկ) իր գուգավորությամբ խսկ և խսկ կաշում  
և գերոյն:


Պիպետի միջոցով, վորի վրա նշանակված և 25 (այսինքն՝  
25 խորանարդ սանթիմեթը) թվանշանը, քաղցուն թերանով ծծում  
են զծից բարձր և ապա ցուցամատը բարձրացնելիս՝ քաղցուն պի-  
պետից դանդաղ դուրս են թափում մինչև վոր հեղուկը հասնի  
զծին (զատել գոգավորության միջոցով): Այդ բանից հետո ցու-  
ցամատով նորից ծածկում են անցքը: Այն ժամանակ պիպետը  
մեծ ցուցական և միշտ մատներով բանում են վերևից ու քաղց-  
վով մինչև լիքը լիքը հետո ցուցամատով սեղմելով փա-  
կում են վերին անցքը: Այսպես նրան տեղափոխում ու պահում  
են մաքուր բաժանի մեջ: Յերբ պիպետի վերին անցքը փակող  
ցուցամատը մի փոքր բարձրանում է, քաղցուն հասում և բաժա-  
կը: Յերբ ամբողջ քաղցուն պիպետից դուրս և հօսում, պիպետի  
ծայրը թիթն կերպով դիպցնում են բաժանի պատին, վորպեսզի  
հեռացնեն պատին կապած կաթիները:

Պիպետի մեջ չպիտի փշել և հարկ չկառ ուշադրություն դարձ-  
նելու, վոր նրա ծայրիկը մի քիչ թաց և մնում: Այդ հանգամանքն  
ուշադրության և առնված պիպետը պատրաստելիս և նկարազը-  
ված ձևով լցնում են բաժանի մեջ ուղիղ 25 խորանարդ սանթի-  
մեթը խաղողի քաղցու, Բաժանի քաղցվով լցնելոց հետո կաթի-  
լանոցից (կապելինից) 2—4 կաթիլ ֆենոլֆտալիինի լուծույթ են  
կաթիլանում նրա մեջ:

Քաղցվով լի բաժանի մոտեցնում են Բյուրեաթի ստորին անց-  
քին, դարձնում են Բյուրեաթի ծորակը և նրանից աստիճանաբար  
թաց են թողնում ալկալիի լուծույթը (տես նկ. № 4): Ալկալիի լու-

Տութիք բուրաքանչուր կոթիլն առաջացնում է վարդագույն տմապիկ, վորը բաժակի միջի քաղցուն ապակյա ծողիկով խառնելու (կամ բաժակը պըտըտեցնելին) արագութիւնը անհատանում է Սպիտակի խաղողից ստացված քաղցուն ալդ զեպքում զեղնում և թուխ գույն և ընդունում: Հետագայում ալկալիի լուծույթն աստիճանաբար քաղցվին ավելացնելիս վարդագույն ամպիկն անհետանում և ալկալի զանգաղորմն և, վերջապես, ալկալիի լուծույթի մի կաթից ամրող քաղցուն ներկվումն վարդի գույնով: Այդ ցույց և տալս, վոր քաղցվի բոլոր թթվուտնուրը հագեցած են ալկալիով: Այս բոլորից հետո նայում ենք Բյուրետի գծիկներին և հաշվում, թի քանի խորանարդ սանթիմեթը ալկալի յն գործ ածվել քաղցվի թթվուտների հակեցան համար:

Վորոշման սկզբում ալկալիի լուծույթն Բյուրետից ավելի արագ են բաց թունում բաժակի քաղցվի միջ, իսկ վերջում՝ կաթիւներով, աշխատելով ավելի չլցնել (այն ժամանակ դույնը թանձրանում և և դառնում համարյա մոռագույն (մալինի գույն):



Ալկալիի լուծույթը և պիտիտի չափը (25 խորանարդ սանթի-

մեթր) այնպիս են հաշված, վոր Բյուրետի վրայի թվանշանն ուղղակի ցույց և տալիս հետաքրքրվող քաղցվի թթվությունը: Ազապես, զիցուք թի, 25 խորանարդ սանթիմեթր քաղցվի վրա բաց ե թողնված 5,6 խորանարդ սանթիմեթր ալկալիի լուծույթ: Այն ժամանակ քաղցվի թթվությունը կլինի «5,6 պրոմիլե» («առ հազար», այսինքն թե մեկ լիտր քաղցվի մեջ դանդում է 5,6 զրամմ գինեթթվուտ (ինչպես ասված և վերևում քաղցվի բոլոր թթվուտներն ընդունվում են գինեթթվուտի տեղ):

Կարմիր քաղցվի թթվությունը վորոշելիս նույնպես վերցնում են 25 խորանարդ սանթիմեթր քաղցու, բայց հետո թորած ջուր են խառնում: Կարմիր քաղցուն ալկալիով հագենալիս դառնում և կապտագուն, կանաչագուն, ապա համարյա թի սեանում են, վերջապես, ընդունում և մոռի (մալինա) գույն:

Թանձրաներկ խաղողի հյութերը, վորոնք Հայաստանում համարյա թե չկան, նախապես գունաթափ են արվում ածուխի միոցով:

Ալկալիի լուծույթը հարկավոր և միշտ խցանով փակված պահել, վորովհետեւ նա ողից փոփոխվում է: Շաքարաչափը, Բյուրետը, պիտիտը և բաժակը պահել մաքուր և չոր:

Բալոր գործիքներն ու լուծույթները հավաքականու խորհըրքային տնտեսությունները կարող են ձեռք բերել Հայաստանի Սիէ Այգե-Գինեզործական Փորձնական Կայանի միջացով, զիմելով վերջնիս զբարւեկի վրա նշանակված հասցեով:

#### ՑՈՒՑԱԿ

Խաղողի քաղցվի բաղադրությունը վորոշելու համար անհրաժեշտ անոթների ու լուծվածքների: —

1. Բյուրետներ ապակյա՝ ծորակով, 50 խորանարդ սանթիմեթրանոց,  $\frac{1}{10}$ -ական բաժանումներով:

2. Պատվանդան (շտատիվ, մետաղյա կամ փայտյա) ողբահամար:

3. Պիտիտ՝ 25 խորանարդ սանթիմեթրթանոց:

4. Բաժակ 50—75 խորանարդ սանթիմեթրանոց:

5. Զողիրկ ապակիա:

6. Գլան ապակյա՝ շաքարաչափի համար:

ՀՀ Ազգային գրադարան



NL0283429

7. Եաքարտչափ Սալեբռնի:
8. Զագառ՝ քաղցուն քամելու համար:
9. Զադառ՝ ալկալիի լուծույթը բլուրեալ լցնելու համար:
10. Սրվակ, 1-2 լիտրանոց, հղկված խցանով, ալկալիի լուծույթի համար:
11. Կաթիլանոց (կապէլուցա)՝ ֆենոլֆտալինի լուծույթը համար:
12. №/3 ալկալիի լուծույթ:
13. Ֆենոլֆտալինի 1% անի լուծույթ (սպիրտի):
14. Քամիչ թուղթ, 1 պլակ (100 թերթից):  
Մի քանի տուրկաներից, ինչպիսիք են բաժակներն ու պիպիտները, ավելի լավ ե ունենալ մի քանի հատ:
- Ալկալիի լուծույթը հարմար ե պահել սրվակում:

ՀԱԽՆ Ալյեն-Գինեգործական Փորձնական Կայտն. —

Հասցե. — Յերեվան, փոստարկութեան 102. Ալյեն-Գինեգործական Փորձակայտն (Նախկին Սարդարյան ալգում):

9 սեպտեմբերի, 1931 թ.

ԳՐԱԴԱՐԱՆ  
ԻՆՍԻՆՈՒԱՏ  
ՀԱՇՈԽՎԵԼԵՆԻԱ  
Համական Խոշ  
ՀՊՀ

